

Գ. Ե Դ Ի Լ Յ Ա Ն

ԴՊՐՈՑԱԿԱՆ ՁԵՆՔ

—

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ—1927

371.62


5-16

Գ. ԵԴԻԼՅԱՆ

ՍՏՈՒԳՎԱԾ Է 1961 Ք.

ԴՊՐՈՑԱԿԱՆ ՇԵՆՔ





6141
38

A $\frac{T}{1855}$

ԴՊՐՈՑԱԿԱՆ ՇԵՆՔ

Ներկայի լավագույն դպրոցի կրթական աշխատանքը տեղի յե ունենում բնության ամեն մի անկյունում՝ գյուղի կամ քաղաքի փողոցում, վարպետի արհեստանոցում, պարտիզում, այգում, դաշտում, գոմում, հասարակական նշանակություն ունեցող մի շենքում, հեռավոր մի քաղաքում կամ գյուղում և այլն. կրթական աշխատանքն ուրեմն անհրաժեշտաբար կապված էի այս կամ այն շենքի հետ:

Այս հանգամանքը՝ սակայն, էի վերացնում դպրոցական հատուկ շենքի կարիքը, վորովհետև կան դպրոցական այնպիսի աշխատանքներ, վորոնք պահանջում են կրթական հատուկ նպատակների համար շինված մի շենք:

Դպրոցական այդ շենքը պետք է բավարարություն տա տեխնիքական, գեղարվեստական և մանավանդ առողջապահական պահանջներին, վորովհետև դպրոցական անցյալ և ներկա փորձից հայտնի յե, թե վորքան կորստաբեր ազդեցություն է ունենում աշակերտների վրա առողջապահական պահանջներին բավարարություն չտվող շենքը. այսպես կոչված «դպրո-

ցական հիվանդություններին՝ մեծագույն մասի պատ-
ճառն են դառնում դպրոցական վատ շենքն ու կահ-
կարասիքը:

Դպրոցական լավ շենքը պետք է գեղեցկությամբ
մի մարմնացումն լինի իր բոլոր մանրամասնություն-
ներին մեջ, վորպեսզի աշակերտն այդ շենքի բոլոր մա-
սերից, ինչպես և նրա ամբողջությունից, մշտապես
գեղարվեստական տպավորություններ ստանա. շենքը
պիտի մեծապես նպաստի գեղարվեստական դաստիա-
րակության:

Գեղարվեստական տեսակետից դպրոցական շենքը
պետք է լինի.

1. Գեղեցիկ և տպավորիչ՝ ներսից ու դրսից, հա-
մապատասխան շրջապատի ճարտարապետական վոճին,
բայց միևնույն ժամանակ պետք է ներկայացնի շրջա-
պատի վոճի կատարելատիպը:

2. Պետք է ունենա պարզ կառուցվածք և ազատ
լինի անտեղի բարդ պաճուճանքներից:

3. Շենքի բոլոր մասերը պետք է ներկված լինեն
պայծառ և ուրախ գույներով:

4. Սենյակների ու միջանցքների պատերը պետք
է զարդարված լինեն գիպսի զարդերով, անդրիններով
և գեղարվեստական նկարներով:

5. Դպրոցի վողջ կահկարասիքը պետք է ունենա
մի վորոշ վոճ, այդ վոճը պետք է համապատասխանի
շենքի ընդհանուր վոճին:

Տարբեր ժամանակաշրջանում շինվել են դպրո-
ցական տարբեր տիպի շենքեր՝ համապատասխան ժա-
մանակի կուլտուրական-մանկավարժական պահանջ-
ներին: Ներկա ժամանակի պահանջներին բավարարու-

թյուն տվող աշխատանքի դպրոցի կրթական աշխատանքները չեն կարող հաջողությամբ իրագործվել հին տիպի դպրոցական շենքի մեջ. աշխատանքի դպրոցի նոր տեսակի աշխատանքները և աշխատանքի մեթոդները պահանջում են նոր ծրագրով շինված շենքեր, շենքեր, վորոնք իրենց արտաքին ու ներքին կառուցվածքով մարմնացնում են առողջապահության, գեղագիտության և նորագույն մանկավարժության պահանջները:

I. ՇԵՆՔԻ ՏԵՂԸ

Գյուղի կամ քաղաքի ամեն մի տեսակ հողաշերտի վրա ամեն մի հեռավորության և ամեն մի տեղում, չի կարելի դպրոցական շենք կառուցել:

1. Դպրոցական շենքը պետք է լինի փոքր ինչ բարձր, չոր, արեվոտ, խաղաղ ու հանգիստ յեվ ընդարձակ մի վայրում, հեռու մեծ շենքերից, գործարաններից, կայարանից, յերկաթուղու գծից, զորանոցներից, մեծ լվածքատներից, ճահիճներից, կեղտոտությունների կուտակման վայրերից և այլն:

2. Ցանկալի յե ընդհանրապես շենքը շինել ավագային կոտ հիմք ունեցող հողամասի վրա, վորովհետև կավահողն ու սևահողը շատ ջուր են պահում իրենց մեջ, ճահճանում ու ցեխոտվում են:

3. Շենքը կարելի յե գյուղից կամ քաղաքից դուրս շինել, սակայն առաջնությունը բնակավայրից մեկուկես կիլոմետրից հեռու չպետք է լինի, այլապես աշակերտները, մանավանդ փոքրիկները, քայլելուց կհոգ-

նեն մինչև դպրոց հասնելը: Դեպի դպրոց ձգված նա-
ն ապահովները պետք է լինեն հարթ, ամուր և չըցե-
խոտվող:

4. Շենքն ամեն կողմից պետք է բաց լինի ողի
յեվ արեվի առատ հոսանքի առաջ և վոչինչ չպետք է
խանգարի ողի և արևի ազատ շփմանը պատերին: Շեն-
քի պատուհանների առաջ պետք է ընդարձակ հորի-
զոն բացվի:

5. Ամեն դեպքում չի հաջողվում, վոր շենքը շինվի
մի ընդարձակ ու ազատ տարածության վրա, հաճախ
դպրոցական շենքի մոտ այլ շենքեր ել են լինում, այդ
շենքերի իրարից ունեցած հեռավորության մասին հե-
տևյալը կարելի չէ ասել. յեթե դպրոցի շենքի դիմաց
մի այլ շենք կա, դպրոցի և այդ շենքի հեռավորու-
թյունը պետք է հավասար լինի այդ յերկու շենքից ամե-
նաբարձրի բարձրությանը՝ յերկու անգամ վերցրած,
նույն պահանջը գոյություն ունի նաև յետևի շենքի
համար, յեթե աշակերտների աշխատանքի սենյակներն
այդ կողմի վրա չեն գտնվում: Դասարանների ու աշ-
խատանոցների պատուհաններից դիմացի շենքը պետք
է հեռու լինի առնվազն 50 մետր տարածությամբ:
Դպրոցական իրար կողքի գտնվող շենքերը, վորոնք
իրար դիմաց պատուհան չունեն, պետք է հեռու լինեն
իրարից 10 մետրով:

6. Շենքը պետք է շինվի մի հանգիստ ու խաղաղ
վայրում, յեթե շենքն անհրաժեշտարար պետք է փո-
ղոցի վրա շինվի, ցանկալի չէ միջանցքները դասավո-
րել փողոցի կողմը, վորպեսզի դասարանի աշխատանքը
չտուժի փողոցի աղմուկից: Շենքը պետք է առհասա-
րակ փողոցից հեռու շինվի առնվազն 10 ից—15 մե-

տըր, դպրոցի շենքի և փողոցի միջև պետք է տարա ծվի
դպրոցի բակը կամ բակի մի մասը:

7. Շենքը պետք է շինել քամու ուժեղ հոսանքներից
ազատ մի վայրում, շենքը քամիներից պաշտպանելու
համար կարելի չի բակի կամ պարտիզի ամբարիս խիտ
ծառեր տնկել:

8 Շենքը պետք է շինել պարտիզի մեջ, բայց
նրանից բաժանված խաղերի ու ֆիզիքական վարժու-
թյունների համար հատկացված բակով: Ծանկալի է
համարվում, վոր առաջին աստիճանի դպրոցի ամեն մի
աշակերտին բակից ընկնի 3 քառ. մետր, իսկ յերկրորդ
աստիճանի դպրոցի աշակերտին 4 քառ. մետր տարա-
ծություն:

9. Շենքը պետք է շինվի մի այնպիսի տեղ, ուր
լվացվելու, խմելու, խոհանոցի և գյուղատնտեսական
զանազան աշխատանքների համար անհրաժեշտ ջուրը
հեշտությամբ մատակարարվի:

10. Շենքն ամեն կերպ պետք է պաշտպանված
լինի խոնավությունից: Շենքի խոնավությանը կարող
են նպաստել զանազան հանգամանքներ, գետնի խո-
նավությունը կարող է հիմքից անցնել պատերին, յեթե
հիմքը խոնավ գետնի վրա չե շինած, կամ հիմքի համար
գործ է ածված խոնավություն ծծող մատերիալ, պա-
տերը կարող են խոնավություն ծծել նաև անձրևից,
շենքը կարող է խոնավ դառնալ նաև տանիքի կաթելուց,
շենքի համար գործածված խոնավ, վոչ չոր մատերիա-
լից, լվացարաններից կամ ջրամաններից թափված
ջրերից և այլն:

Վորպեսզի շենքը ազատ մնա խոնավությունից,
ուշադրության պետք է առնել հետևյալ պահանջները:

ա) Չպետք է թողնել, վոր անձրևի, ձյան և այլ ջրերը կանգնած մնան բակում և ճահճանան:

բ) Շենքի հիմքի մոտ առանձնապես ջուրը չպետք է կանգնած մնա և այդ մասում չպետք է թողնել, վոր բուսականություն աճի: Ցանկալի յե հիմքի մոտերով, շենքի շուրջը, մի մետրաչափ լայնք ունեցող տրոտուար շինել ցեմենտից կամ սալահատակից՝ փոքր ինչ թեք: Շենքի շուրջը մաքուր պետք է պահել և թույլ չտալ, վոր փորվածքների առաջանան: Տանիքից ջուր բերող խողովակների տակ քարե կամ ցեմենտի գուշ պետք է շինել, վոր ջուրը փորվածքների չստեղծի և չլճանա հիմքի մոտ:

գ) Պետք է լուրջ ուշադրություն դարձնել շենքի նորոգության վրա. տանիքի, պատերի, պատուհանների, հիմքի մոտի թերություններն անմիջապես պետք է վերացնել, վորպեսզի խոնավությունը չթափանցի ներս:

դ) Դպրոցական նոր շենքում պարապմունքները պետք է սկսել մի տարուց հետո, յեթե մանավանդ շինությունը վերջացել է ամառվա վերջը:

II ՇԵՆՔԻ ՄԵԾՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄԸ

Մեծ քաղաքներում պատահում են այնպիսի շենքեր, վորոնք շինված են մեծաքանակ աշակերտության, նույնիսկ հազար հոգու համար: Իսկապես դպրոցը պետք է փոքրաքանակ աշակերտություն ունենա, վորպեսզի հնարավորություն ստեղծվի աշակերտության և ուսուցչության մեջ սերտ և մտերմական կապեր հաստատելու, կազմակերպելու աշակերտության հա-

մար աշխատանքի նպաստավոր և առողջապահական պայմաններ:

1. Ներկա պայմաններն ինկատի ունենալով թույլատրելի յե համարվում մի դպրոցական շենքում տեղավորել առ. առավել 300 աշակերտ ինչ-ինչ պատճառներով յեթե նույն տեղում 300-ից ավելի աշակերտության համար պետք է դպրոցական շենք շինվի, այդ դեպքում ցանկալի յե շենքի համար ընտրված ընդարձակ տարածության զանազան մասերում միջանի, իրարից անկախ շենքեր շինել կողք-կողքի կամ դեմ առ դեմ (պավիլիոն սխեմա), զգալի հեռավորությամբ:

Այս սխեման ավելի յե ցանկալի համարվում, վորովհետև յեթե մի մասում հրդեհ է պատահում, մյուս մասերն անվտանգ են մնում, յեթե մի տեղ վարակիչ հիվանդություններ են պատահում, մյուս շենքերում կարելի յե վորոշ դեպքերում շարունակել աշխատանքները և վերջապես այսպիսի մանր շենքերում հնարավոր է լինում կրթական աշխատանքներն ավելի ցանկալի ձևերով կազմակերպել:

Սովորական դպրոցական շենքերը շինվում են 50, 100, 150, 200, 250 և 300 աշակերտի համար:

2. Գյուղական դպրոցների շենքերը շինվելու յեն սովորաբար մի հարկանի, բացառիկ դեպքերում, յեթե գյուղը մեծ է, յերկու հարկանի. քաղաքներում, ծայրահեղ անհրաժեշտության դեպքում միայն, թույլատրվում է շինել շենք յերեք հարկանի, բայց վոչ յերեք ավելին:

Յեթե դպրոցական շենքը յերկու կամ յերեք հարկանի յե, ներքին հարկում պետք է տեղավորել ստո-

րին խմբակի աշակերտներին, վորպեսզի փոքրիկները շատ վեր ու վար չանեն և հնարավորություն ստեղծվի փոքրիկների աշխատանքը տարրեր ժամանակ սկսելու և վերջացնելու, առանց վերին հարկում կամ հարկերում աշխատող բարձր խմբակների աշակերտներին խանգարելու:

3. Ցանկալի յե միկոդմանի շենքը, ուր դասարանները տեղավորված են մի կողմում և բացվում են միջանցքի վրա. այսպիսի շենքերում ողավոխությունն ավելի հեշտ է կատարվում և հնարավորություն է ստեղծվում դասարաններն դասավորել դեպի այն կողմը, վորը ցանկալի յե առողջապահության տեսակետից:

4. Շենքը շինելիս խնկատի պետք է ունենալ այն հանգամանքը, վոր ապագայում կարող է կարիք զգացվել այդ շենքը ընդարձակելու դեպի կողքերը կամ դեպի վեր (նոր հարկ):

5. Դպրոցական բուն շենքը առնվազն պետք է ունենա հետևյալ մասերը. 1) գլխավոր մուտք կամ մուտքեր, 2) հանդերձասենյակ, 3) հանգստասրահ, 4) դահլիճ, 5) ուսուցչանոց և դպրոցական գրասենյակ 6) մանկավարժական գրադարան — թանգարանի սենյակ և 7) բազմատեսակ դասարաններ և արտաքնոց:

6. Բոլոր այս մասերն պետք է ամփոփված լինեն հիմնական շենքի մեջ այնպես, վոր հնարավոր լինի մեկից մյուսն անցնելու առանց շենքի միջանցքները թողնելու, վորպեսզի աշակերտը թափանցիկ ողի հոսանքի մեջ չնկնի կամ ձմեռը դրսի ցուրտ ողից չնեղվի:

7. Դպրոցական շենքի հետևյալ մասերը՝ 1) մարզարանը, 2) արհեստանոցները, ցանկալի յե տեղավորել դպրոցական հիմնական շենքի մեջ, յեթե դրա համար

կան հատուկ հարմարություններ, հակառակ դեպքում
թուլլատրելի յե այդ մասերը հիմնական շենքից հեռու
շինել, բայց յերկար ու նեղ ծածկով միացած հիմնա-
կան շենքի հետ, վորպեսզի աշակերտն անձրև որերին
առանց իրեն վտանգելու՝ շենքի մի մասից մյուս մասն
անցնելու հնարավորություն ունենա:

8. Կլթական նպատակով շինված 1) խոհանոց—
ճաշարանը, 2) լվածքատունը, 3) բաղնիքը և 4) գոմը
պետք է մայր շենքից հեռու լինեն. հազիվ թե ներկա
պայմաններում առողջապահական այնպիսի նպատա-
վոր պայմաններ ստեղծվեն, վոր հնարավոր լինի այդ
մասերը մայր շենքի ներսն առնելու:

9. Դպրոցական շենքի ամենակարեւոր մասերն
այն վայրերն են, ուր աշակերտն անց է կացնում իր
ժամանակի ամենամեծ մասը, այն է՝ դասարանները և
արհեստանոցները, այդ պատճառով ել մեծ ուշա-
դրություն պետք է դարձնել, վորպեսզի այդ վայրերը
գեղարվեստական և առողջապահական տեսակետից մի-
անգամայն կատարյալ վիճակում լինեն:

10. Դպրոցական շենքի ամեն մի մաս պետք է
այնպես շինված լինի, վոր համապատասխանի լրիվ
կերպով իր կոչման, այսինքն՝ ամեն մի մասի դռները,
պատուհանները, հատակը, ողափոխության հարմարու-
թյունները, պատերի զարդարանքները, կահկարասիքը
և այլն, այնպես պետք է լինեն, վոր բոլորն ել ծա-
ռայեն այն նպատակին, վորի համար շինված է շենքի
այդ մասը:

ՇԵՆՔԻ ՄԱՍԵՐԸ

1. Մուտք յեվ միջանցքներ. դպրոցի շենքը պետք
է ունենա մեկ կամ միքանի գլխավոր մուտք՝ բացվող
միջանցքի վրա և մի պահեստի դուռ. դրսի հետ այս

կերպ կապված մուտքը միջանցքից կամ հանդերձա-
սենյակից պետք է միջանի, առնվազն յերեք մետր
տարածության վրա բաժանվի ապակեծածկ բարակ
պատով, վորպեսզի դրսի դուռը բացվելուց առա-
ջացող ողի սառն ու ուժեղ հոսանքը չթափանցի
միջանցքը: Դռան յետևը յեղող այդ փոքրիկ բաժան-
մունքում կտեղավորվեն վտարերը մաքրելու հարմա-
րությունները: Դասարանի ու մյուս աշխատանոց-
ների դռները պետք է բացվեն անպայման կերպով
միջանցքի վրա, այս կերպ միայն այդ սենյակները
ձմռանը չեն յենթարկվի ողի ցուրտ հոսանքի ազդե-
ցության և իրենց միջի տաք ողը հեշտությամբ չեն
բաց թողնիլ դուրս: Աշակերտները գլխավոր մուտքից
միջանցքն անցնելով անմիջապես դրսի ցրտից չեն
ընկնում դասարանի տաք ողի մեջ, այլ քայլում են
նախ միջին տաքություն ունեցող միջանցքով, հար-
մարվում են տեմպերատուրային այս նոր պայմաննե-
րին և ապա միայն դասարան մտնում: Դասարանից
դուրս յեկող աշակերտն ել միջանցքի միջին տեմպե-
րատուրայի միջից անցնելով՝ նախապատրաստվում է
դրսի պաղ ողի համար:

2. Հանդերձասենյակ. ցեխ, անձրևային և ցուրտ
որերին աշակերտներն իրենց վերարկուները, գլխարկ-
ները, կրկնաշորիկները, անձրևանոցները պետք է թող-
նեն հանդերձասենյակում. այդ թրջված, ցեխոտված,
փոշոտված կամ սառած իրերը յեթե դասարանները
տարվեն, դասարանների ողը կսառչի, կփոշոտի, ան-
դուր գոլորշիներով կլցվի, իսկ հատակն ել կկեղտոտի:
Քանի վոր այդ սենյակի մեջ են հանվում աշակերտնե-
րը, այդ պատճառով ել ձմեռը պետք է տաքացվի հար-

կավոր չափով, ոգի անցանկալի հոսանքներից ազատ լինի, լուսավոր լինի և բացվի միջանցքի վրա, վորպես- զի այնտեղ մտնողը միջանցքից մտնի և դուրս գալիս ել անմիջապես միջանցքն անցնի:

3. Հանգստասրահ. հանգստասրահն այնքան մեծ պետք է շինել, վոր ամեն մի աշակերտի ընկնի մեկ կամ առնվազն կես քառակուսի մետր տարածություն:

Հանգստասրահը շինվում է նրա համար, վորպես- զի վատ կամ ցուրտ յեղանակներին աշակերտները հա- վաքվեն այդտեղ հանգստանալու, փոքր ինչ վազվզելու, և խաղալու. դպրոց շուտ յեղած աշակերտները նույն- պիս հավաքվում են հանգստասրահը: Յեթե դպրո- ցը հատուկ դահլիճ չունի ներկայացումների ու հան- դեսների համար կամ մարզարան, ամենայն հեշ- տությամբ կարելի յե ոգտագործել այդ նպատակներով հանգստասրահը՝ միջանի հարմարություններ ստեղ- ծելուց հետո:

4. Ա) Գրավոր ու բանավոր պարապմունքների սեմ- յակ—դասարան. 1. Յանկալի յե դասարաններն այն- պես շինել, վոր աշակերտների աշխատանքի ժամանակ արև չլինի, իսկ պարապմունքներից հետո ամբողջովին վողողվի արևով. սակայն ի նկատի ունենալով այն հան- գամանքը, վոր ամառվա շատ տաք օրերին պարապ- մունք չի լինում, վոր նպատակահարմար վարագույր- ների ոգնությամբ կարելի յե արևի ճառագայթների թափը թուլացնել, վոր արևի նշանակությունը շատ է մեծ մանկան առողջապահական կյանքի և դասարանի տաքացման համար, ներկայի առողջապահներից շատ- շատերն այն կարծիքին են, վոր դասարանները կարե- լի յե տեղավորել օեճֆի արեվելյան, հարավ-արեվելյան յեվ հարավային կողմը:

2. Դասարանի լայնքը, յերկայնքը յեվ բաժնու-
թյունը պետք է վորոշ չափեր ունենան: Յեթե դասա-
րանը հարկավոր չափից ավելի յերկայն լինի, այն
դեպքում ուսուցիչը դժվարությամբ վերահասու կլինի
աշակերտների աշխատանքներին, թե ինքը պետք
է բարձր խոսի և թե աշակերտները, վորպեսզի լսելի
լինեն. հեռավորության պատճառով աշակերտները
դժվարությամբ կտեսնեն գրատախտակին գրվածնե-
րը, կամ ցույց տրվող իրերը: Յեթե դասարանի լայն-
քը շատ մեծ լինի և դասարանի լույսը միմիայն մի
կողմից թափանցելիս լինի, այն դեպքում լույսը հա-
վասարաբար չի տարածվիլ սենյակի բոլոր մասերի
վրա և պատուհանների հակառակ կողմ յեղող պատի
մոտ կստացվի համեմատաբար խավար տարածություն:
Դասարանի բարձրությունը ևս շատ մեծ չպետք է լի-
նի, վորովհետև բարձր սենյակն ավելի մեծ ծախս է
պահանջում շինելու համար, ձայնն լավ չի տարածվում
և ձմեռն ել տաքացնելը թանգ է նստում:

Այս հանգամանքները հաշվի առնելով՝ դասարա-
նի համար առաջադրվում են հետևյալ չափերը՝

Յերկայնք	9 մետր
Լայնք	6 »
Բարձրություն	4 »

Հ. Լ. Ժողկոմատը ինկատի ունենալով միջանի
դժվարություններ, թույլատրելի յե համարում նաև
հետևյալ չափերը՝

Յերկայնք	— 12	արշին	մոտ 8,5	մետր
Լայնք	8	»	» 5,7	»
բարձր.	5,5	»	» 3,9	»

(Տես՝ Ալբոմ լուսհիմնարկների տիպական շենքե-
րի նախագծերի):

Այդպիսի մի դասարանում գերմանացի մանկավարժներն առաջարկում են տեղավորել 40 աշակերտ, վոմանք նույնիսկ 50. Ռուսաստանի մանկավարժներն այն կարծիքին են, վոր աշխատանքի դպրոցի այսպիսի մի դասարանում պետք է տեղավորել սովորաբար 30 աշակերտ, իսկ յերբեմն կարելի յե վորոշ տեսակի աշխատանքների ժամանակ յերկու խմբակների աշակերտների (50—60 հոգի) միացյալ աշխատանք կազմակերպել այդ նույն դասարանում:

Դասարանն այնպես պետք է շինել, վոր ամեն մի աշակերտի ընկնի մոտ մեկ և կես՝ քառ. մետր հատակը կամ 6-ից մինչև 7 խորանարդ մետր տարածություն:

3. Դասարանի պատերն իրար հանդիպման տեղում պետք է ուղղանկյուն չկազմեն, այլ կլոր գիծ և այնպես պետք է շինված լինեն, վոր ձայն չանցկացնեն:

Հատակից հաշված մեկ և կես մետր բարձրությամբ պետք է պատերը ներկվեն ձիթաներկով և բաց կապույտ գույնով, վորպեսզի աշակերտը պատին կպչելիս, կամ պատը ջրով լվանալիս, գույնը չթափի: Պատի վերին մասերը, ինչպես և առաստաղը պետք է ներկել սպիտակ գույնով:

4. Դասարանի դուռը կամ դռները պետք է բացվեն աշակերտի դիմացի պատից կամ նրա աջ կողմը գտնվող պատի այն մասից, վորը մոտ է այդ և աշակերտի դիմացի պատի միացման տեղին:

5. Դասարանի հատակը պետք է շինված լինի ամուր, դիմացկուն, լավ հարթված տախտակից, վորը ներկված պետք է լինի ձիթաներկով, տախտակներն իրար հանդիպման տեղում նույնիսկ փոքրիկ բացվածքներ չպետք է ունենան: Ցանկալի յե պարկետի հատակը:

6. Գրատախտակը պետք է ամրացվի աշակերտի դիմացի պատի մեջ տեղն, կամ պետք է դրվի պատի մեջ տեղի մոտ. ուսուցչական ամբիոնը և գրասեղանը պետք է տեղավորել գրատախտակի աջ կամ ձախ կողմը:

Ամեն մի դասարան պետք է ունենա իր լվացարանը, պահարանը կամ պահարանները:

Բ) Բնագիտական փորձերի դասարանը պետք է շինվի անֆիտիատրաձև, այսինքն գրասեղանների շարքերն իրարից բարձր պետք է շինվեն, վորպեսզի աշակերտներն առանց իրար խանգարելու, պարզ կերպով տեսնեն ուսուցչի կատարած փորձերը. այսպիսի մի դասարանում ամեն մի աշակերտի պետք է ընկնի 2 ք. մ. տարածություն: Գազերը դուրս գալու հատուկ անցքեր պետք է լինեն: Այս կամ նրա կողքի դասարանում աշակերտների գործնական աշխատանքների համար հատուկ հարմարություններ պետք է ստեղծվեն:

Գ) Արհեստանոցում ամեն մի աշակերտի պետք է ընկնի 3. քառ. մետր տարածություն, արհեստանոցը պետք է լինի ավելի քան լուսավոր, կարելի չե յերկու, նույնիսկ յերեք պատերի մեջն ել լուսամուտներ շինել, բացի աշխատողների դիմացի պատից:

Այս կերպ լույսն ավելի համաչափ է տարածվում աշխատանոցում, կարելի չե ավելի լայն տարածությամբ աշխատանոց շինել, ավելի շատ թվով աշխատավորներն մոտ լինում լուսամուտներին և հնարավորություն է ստեղծվում արագություն հիմնովին ոգափոխել աշխատանոցը:

Դ) Նկարչության դահլիճը ցանկալի չե շինել շենքի հյուսիսային կողմն, վորպեսզի մեղմ-հանգիստ լույս ստացվի. կարելի չե շինել շենքի վերին հարկում այնպես, վոր տանիքից ևս լույս ստացվի:


Ե) Յերգի դահլիճը պետք է շինված լինի այնպիսի պատերով, վոր ձայնը դուրս չտարածվի, սովորական դասարանից ավելի մեծ պետք է լինի, վորովհետև յերգող աշակերտն ավելի մեծաքանակ ողի կարիք ունի:

2) մարզսնիքի սրահը պետք է լինի լայն, յերկար ու բարձր, լավ սրահը պետք է ունենա 24 մետր յերկայնք, 13 մետր լայնք, 6 մետր բարձրություն: Առնվազն ամեն մի աշակերտի պետք է ընկնի 3 ք. մետր տարածություն: Սրահը յերկու կողմից պետք է պատուհաններ և ողափոխիչներ ունենա, հատակն այնպես շինված լինի, վոր փոշի չբարձրանա, լիակատար մաքրություն պետք է իշխե, վորովհետև աշակերտները մեծաքանակ ող են շնչում և արտաշնչում մարզանքի ժամանակ: Յեթե մարզատունը հեռու է դպրոցի շենքից, պետք է նրա հետ միացած լինի ծածկ ունեցող ճանապարհով:

Է) Դպրոց սկան խոհանոցն աշակերտների աշխատանքի սենյակներից մեկն է և պետք է շինվի կրթական նպատակով. խոհանոցը պետք է լինի լուսավոր և ողառատ, յեթե կցված է շենքին, պետք է ունենա բոլորովին ջուկ մուտք է մի այնպիսի տեղ և այնպես պետք է շինված լինի, վոր հոտը չտարածվի աշակերտների աշխատանոցներում և դասարաններում:

Ը. Բաղնիք. — մեծաքանակ աշակերտներով դպրոցը պետք է ունենա այնպիսի մի բաղնիք, ուր աշակերտները խուճր-խուճր կարող են լողանալ թե տաք և թե պաղ ջրով: Շուտ-շուտ լողացող աշակերտի մարմինը լինում է թարմ ու աշխույժ, հոտ չի արձակում և պաշտպանված է լինում դանադան հիվանդություններից:

Աշակերտները պետք է հանվելու տեղ ունենան, թե այդ տեղը և թե լողանալու սենյակը պետք է տա-



քացվելու հարմարություններ ունենան և ողով առատ լինեն:

Հանվելու տեղը պետք է ունենա 20° իսկ լողանալու տեղը 30° (8) տաքություն: Դպրոցի բաղնիքը պետք է ջրցիրներ ունենա, վորի տակ պետք է լողանան աշակերտները:

Աշակերտները լողանալուց հետո պետք է դուրս գան բաղնիքից վոչ թե հանվելու սենյակով, այլ առանձին հատուկ միջանցքով:

Թ. Արտաքնոց. 1. արտաքնոցը պետք է շինել շենքի մեջ, յեթե նույնիսկ տեղում գոյություն չունի կոյուղի. կոյուղու բացակայության դեպքում արտաքնոցն այնպես պետք է շինել, վոր հոտը չտարածվի շենքում, կեղտոտությունը հավաքի շենքից մի փոքր հեռու, ցեմենտից շինված և ծածկված տեղում և հնարավորություն լինի այդ տեղը մաքրելու հարկավոր ժամանակ:

2. Արտաքնոցը այնպես պետք է շինել, վոր աշակերտները չմրսեն գործածության ժամանակ, նա պետք է նախասենյակ ունենա և տաքացնելու հարմարություն:

3. Արտաքնոցը պետք է ողափոխության հարմարություն ունենա:

4. Ամեն մի 10—15 աշակերտի համար պետք է շինել արտաքնոցի մի բաժանմունք:

5. Արտաքնոցի հատակն ու պատերը մոտ $1\frac{1}{4}$ մետր բարձրությամբ պետք է շինել ցեմենտից, տոմետից կամ ասֆալտից:

6. Արտաքնոցի պատերն ու հատակը պետք է վողովել ջրով, իսկ որը մի անգամ մաքրել աղտահանիչ նյութերով (ամենապարզ միջոցն է կրաջուրը—մի դույլ ջրի մեջ խառնել հինգ ֆունտ կիր):

7. Ներկայի միջանի աննպատակ հանդամանքներ
ինկատի ունենալով՝ արտաքնոցը կարելի չէ շենքից
հեռու, մի առանձին տեղ շինել:

III ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

Լույսը գրգռում, յեռանդի յե բերում մարդու
որգանիզմը, արագացնում նրա մեջ կատարվող պրո-
ցեսսները՝ ազդում շնչառության մարսողության, տե-
սողության և մաշկի գործունեության վրա, բարձրա-
ցնում տրամադրությունը, վոլնչացնում բազմաթիվ
ֆնասակար միկրոբներ: Վատ, մռայլ յեղանակն ու ան-
բավարար լույսը թուլացնում են մարդու աշխատունա-
կության ուժը: Յերիտասարդ որգանիզմի համար լույսն
առանձին արժեք ու նշանակություն ունի:

Կրթական աշխատանքի ժամանակ լույսի խնդի-
րը դրական հիմունքի վրա դրված կլինի այն դեպ-
քում, յեթե դպրոցական շենքը շինելու ժամանակ հա-
շվի առնվեն հետևյալ պահանջները:

1. Աշակերտի աշխատանքի սենյակի լույսն այն-
քան զորեղ պետք է լինի, վոր սենյակի ամեն մի տե-
ղում աշխատող աշակերտ առանց աչքերը ավելորդ
չափերով լարելու՝ կարողանա դյուրությամբ աշխա-
տել: Սենյակի լույսը սակայն շատ ուժեղ, «կուրա-
ցնող» չպետք է լինի, վորովհետև աչքի նյարդները
գրգռվում են հիվանդագին չափերով:

2. Լույսը պետք է ընկնի աշխատող աշակերտի
ձախ կողմից: Աշակերտի դիմացից ընկնող լույսը
թուլատրելի է, վորովհետև շատ ուժեղ է փայլում,

ուսուցչի դեմքը, գրատախտակի վրա գրվածը և դի-
մացից ցույց տրվող առարկաները պարզ չեն յերևում,
այլ ստվերի մեջ, առաջին շարքի աշակերտները ստվեր-
ներ են գցում յետևի շարքում նստածների վրա:

Աշխատող աշակերտության յետևից ընկնող լույսը
ևս ցանկալի չէ, վորովհետև ուսուցչին աշակերտներին
պարզ չի տեսնում, յետևի շարքերն առաջին շարքե-
րում նստածների վրա ստվերներ են գցում, գրատախ-
տակի վրա գրվածները պարզ չեն կարդացվում լույսի
թուլության ու հեռավորության պատճառով:

Միմիայն աջից ընկնող լույսը ևս ցանկալի չի,
վորովհետև գրող աշակերտի թաթի ստվերն ընկնում է
գրածի վրա:

Այս տվյալներից յեզրակացվում է, վոր յեթե
լույսը միմիայն մի պատից պետք է լինի, ապա այդ
պատը պետք է գտնվի աշակերտի ձախ կողմը: Այդ-
պիսի աշխատանոցի լայնքը 6 մետրից մեծ չպետք է
լինի, վորովհետև միմիայն մի կողմից ընկնող լույսը
կարող է բավարարել վեց մետր լայնք ունեցող սեն-
յակին. յեթե լույս չարձակող պատը պատուհաններ
ունեցող պատից հեռու լինի վեց մետրից ավելի, այն
դեպքում պատուհանների հակառակ կողմ յեղող պատի
մոտ աշխատող աշակերտների համար լույսի քանակն
անբավարար կլինի:

Այժմ առողջապահության մասնագետներն այն
կարծիքին են, վոր թույլատրելի յե աշակերտի աջից
և ձախից թափանցող լույսը, այդ դեպքում դասարանն
ավելի լուսավոր ու ուրախ տեսք է ընդունում, հնա-
րավորություն է ստեղծվում ավելի լայն դասարաններ
շինել, ավելի մեծաքանակ աշակերտություն է պա-

տոուհաններին մոտ աշխատում և իրար դիմաց յեղող պատուհանները բանալով՝ դասարանի ողջ մաքրվում և արագ կերպով և հիմնովին:

3. Լուսավորության համար ցանկալի դրություն և ստեղծվում այն դեպքում, յերբ աշակերտն իր նստած տեղից ձախ նայելով յերկնի մի կտոր տեսնի:

4. Դասարանն բավարար չափով կլուսավորվի այն դեպքում, յերբ դասարանի պատուհանների լույս արձակող տարածությունը հավասար լինի նույն դասարանի հատակի տարածության $\frac{1}{3}$ -ին, բավարար և համարվում նաև $\frac{1}{5}$ մասը:

5. Պատուհանը հատակից բարձր պետք է լինի մի մետր և վորքան կարելի յե պետք է մոտենա առաստաղին: Պատուհաններն այնքան շատ պետք է լինեն և այնպես պետք է դասավորված լինեն պատի վրա, վոր շատ մոտ լինեն իրար, ցանկալի յե, վոր ամբողջ պատը մի մեծ պատուհանի տպավորություն թողնի. պատուհաններն յերբ իրարից հեռու յեն լինում, նրանց միջի լույս չարձակող տարածությունը ստվեր և ձգում մոտը նստած աշակերտի վրա: Լուսամուտի շրջանակները նույնպես շատ նեղ պետք է լինեն, վորպեսզի շատ լույս չկլանեն և ստվերներ չձգեն և պիտի ներկված լինեն սպիտակ գույնով: Կրկնափեղկը բուն պատուհանի փեղքից հեռու պետք է լինի առնվազն 25 սանտիմետր:

6. Ամենալավ ապակին անգամ կլանում է դրսի լույսի 5-ից 6 տոկոսը, հասարակ ապակին շատ ավելի մեծ չափով և լույս կլանում, այդ պատճառով ել դպրոցի պատուհանների համար պետք է գործածել լավագույն ապակի:

7. Պատուհանները մաքուր սլետի և պանել կեղ-
տից, փոշուց ու գոլորշիներից, վորպեսզի լույսի անար-
գել ներս թափանցումը չխանգարվի:

8. Լուսամուտն ողափոխության էլ և ծառայում,
այդ պատճառով հեշտությամբ պետք է բացվեն նրա
թե վերին և թե ներքին մասերը: Բացված փեղքերը
չպետք է խանգարեն պատի մոտի անց ու դարձը:

9. Արև որերին, յերբ արևի ճառագայթներն ըն-
կնում են դասարան և կարող են գրգռել և հոգնեցնել
աշակերտների աչքերը, պատուհանները պետք է ծած-
կել վարագույրով, վորը շինված պիտի լինի բարակ,
միապաղաղ սպիտակ կամ բաց մոխրագույն, մեծ քա-
նակով լույս, բայց վոչ ճառագայթներ բաց թողնող
կտորից: Վարագույրը այնպես պետք է շինված լինի,
վոր պատուհանը բացած դեպքում ևս հնարավոր լի-
նի նրանից հեշտությամբ ոգտվել, գործ չածված դեպ-
քում այնպիսի մի տեղ պետք է հավաքվի և այնքան
քիչ տեղ պետք է բռնի, վոր ստվեր չտա:

10. Յեթե դպրոցի շենքում տեղի յեն ունենում
գիշերային պարապմունքներ, այն դեպքում հարմա-
րություններ պետք է ունենալ աշխատանոցները լու-
սավորելու արհեստակցան կերպով: Արհեստական կեր-
պով կարելի յե շենքը լուսավորել ելեկտրականությամբ,
գազով և նավթ վառելով: Լավագույն լուսավորություն-
նը համարվում է ելեկտրական լուսավորությունը, վո-
րովհետև այդ դեպքում թթվածին չի կլանվում, ողը
չի լցվում ածխածնով, ավելորդ չափով չի տաքա-
նում սենյակը, հրդեհի վտանգը քիչ է. նավթի լուսա-
վորությունն այս առավելությունները չունի:

Արհեստական լուսավորության դեպքում լույսը
պետք է ընկնի աշխատողի ձախ կողմից, իսկ ավելի ցան-

կալի յե վերևից տարածվող լույսը: Արհեստական լուսավորությունն ուղղակի յե կոչվում այն դեպքում, յերբ լույսը լուսատու մարմնից ուղղակի ընկնում և աշխատողի վրա, յեթե լուսատուն մոտիկ և աշխատողին, յերկուսի միջով մարդ անցնելիս, կամ իր փոխադրելիս առաջանում են ստվերներ, լույսն այս դեպքում շատ ել համաչափ չի տարածվում և խանգարում և գրատախտակի վրա գրածը և ուսուցչին պարզ տեսնելուն, հենց այդ պատճառով ել ուղղակի լուսավորության դեպքում լուսատուն պետք և բարձր կախված լինի:

Ավելի ցանկալի յե համարվում անուղղակի լուսավորությունը, յերբ վերևում, առաստաղին մոտ յեղող լուսատույի ներքևի մասը ծածկված և անթափանցիկ լուսամփոփով, վորն լուսատուի լույսը ձգում և առաստաղի և պատի վերին մասերի վրա, վորտեղից լույսը առանց ստվեր տալու, ցերեկվա լույսի պես, հավասարապես տարածվում և դեպի ներքև՝ առանց գրգռելու աշխատողի աչքերը:

IV ՈՂՅԵՎ ՈՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Մաքուր ողը բաղկացած և

78,20% ազոտից

20,78% թթվածնից

0,01% ածխաթթույից:

Մարդու արտաշնչած ողը պարունակում և

79% ազոտ

16,03% թթվածին

4, 36% ածխաթթու

Արտաշնչած ողի պատճառով սենյակի ողի մեջ
շաաանում ե ածխաթթուն:

Թթվածինը թոքերի մեջ խառնվում ե արյան
հետ և տարածվում ամբողջ մարմնի մեջ, ավելացնելով
նրա կենսական ուժերը, իսկ ածխաթթուն թունավո-
րում ե մարմնի բջիջները, խանգարում նրանց բնա-
կան գործունեյությունը՝ առաջացնելով գլխացավ, թու-
լություն, նույնիսկ ուշաթափություն: Դասարանի ողի
ածխաթթուն 0,01 տոկոսից ավելի չպետք ե լինի,
ավելին արդեն դառնում ե ֆուսակար:

Ողն ապականվում, ֆուսակար ե դառնում վոչ
միայն արտաշնչած ածխաթթույով, այլ և թոքերից ու
մաշկից դուրս յեկող գոլորշիներով, կեղտոտ մարմնից
և շորերից բարձրացող հոտերով և այլ աննկատելի
նյութերով, կոշիկներից, շորերից և դրսից ներս թա-
փանցող փոշիով: Դասարանում յեղող հիվանդ աշա-
կերտները ևս մեծապես նպաստում են ողի ապակա-
նության: Ողի մեջ տարածվում են սկարլատինայի
դիֆտերիաի, ծաղկի, թոքախտի և այլ միկրոօրններ:
Ողը լիքն ե բազմատեսակ միկրոօրգանիզմներով:

Հարկավոր ե պարզել այն հարցը, թե մի դասա-
րան մի ժամվա ընթացքում ինչքան ող պիտի ունե-
նա, վոր բավականացնի մոտ 30 աշակերտի: Սովորա-
կան դասարանն, ինչպես տեսանք, ունի 9 մետր յեր-
կայնք, 6 մետր լայնք և 4 մետր բարձրություն, ուրեմն
216 խ. մետր ծավալ, ուրեմն և այդքան խորանարդ
մետր ող: Այդ դասարանում աշխատում են 30 աշա-
կերտ, վորոնցից ամեն մեկը մի ժամվա ընթացքում
կարիք ունի 25 խոր. մետր ողի միասին՝ 750 խ. մ.
ողի. ուրեմն մի ժամվա ընթացքում ողը պետք ե նո-

րոգւի յիրեք անգամ, վերապահի բաւարարի դասա-
րանում աշխատող աշակերտության:

Ողի ապականման և ողի պակասութեան այս
փաստը դասարանների ողը նորոգելու, թարմացնելու
պահանջն է դնում կրթական աշխատավորների առաջ,
ողի փոխանակութեան անկանոնութիւնը բացասաբար
է ազդում աշակերտների առողջութեան վրա:

Պետք է ինկատի ունենալ այն հանգամանքը,
վոր սենյակի և դրսի ողի ջերմութեան տարբեր աստի-
ճանների պատճառով, ողը սենյակից ներս ու դուրս է
անում պատերի, առաստաղի, հատակի աննկատելի
ծակոտիկներից, դռների, պատուհանների, վառարան-
ների նեղ ճեղքվածքների ու անցքերից: Բայց անվի-
ճելի ճշմարտութիւնն պետք է համարել նաև այն, վոր
այդ բնական ողափոխութիւնը չի կարող բաւարարել
աշակերտների ողի պահանջը և չի կարող այդ կերպ
ողը մաքրվիլ ցանկալի չափերով, հենց այդ պատճա-
ռով եւ պահանջվում է դիմել արհեստական ողափո-
խութեան:

1. Որվա ընթացքում պարբերաբար՝ դասամիջոց-
ներին կամ այլ հարմար ժամանակ, բոլոր աշակերտ-
ներին պետք է դուրս հանել դասաբանից, բանալ բո-
լոր պատուհաններն ու դուռը կամ դռները վորապահի
թափանցող ողի հոսանք առաջանա, իբրև սենյակը
մաքրելու լավագույն միջոց:

Չմեռը բոլոր պատուհանները միջանի ըռպելով
պետք է բանալ միանգամից և հետո անմիջապես փա-
կել, վորովհետև ավելի յերկար բաց պահելու դեպքում
իջնում է դասարանի տաքութիւնը, իսկ այդ զգալի
փոփոխութիւնը վատ է անդրադառնում աշակերտնե-

րի առողջության վրա: Յերբ դուրսը տանելի չափով տաք է, կարելի չէ պատուհանները մշտապես բաց թողնել, յետե խանգարող արգելափակումներ չկան: Աշակերտների զբաղված ժամանակը պետք է թարմացնել հանգստասրահի և միջանցքի ուղի:

2. Դասարանը պետք է ունենա հատուկ ողանցքներ, վորոնց միջոցով ողը ներս է մտնում դասարան և այնտեղից դուրս գալիս: Այդ ողանցքները կարող են շինվել զանազան տեղերում:

ա) Պատուհանները պետք է ողանցքներ ունենան վերևի մասում, ողանցքը բացվելիս փեղք մի փոքր դեպի վերև պետք է դարձած լինի, վորպեսզի ողի սառը հոսանքը չհարվածի աշակերտներին, այլ նախ ուղղվի դեպի առաստաղն ու դասարանի վերին մասերը և մի փոքր տաքացած ներքև իջնի:

բ) Հիմքի մոտից մի անցք ընդհատակյա խողովակի միջով դրսի ողը անց է կացնում դեպի վառարանի վրա գտնվող ողանցքի բացվածքը:

գ) Դրսի ողի ներս թափանցման համար շինվում են դասարանի առաստաղի կամ պատի վերին մասի վրա ողանցքներ, բացվածքը ծակոտիներով շինված, վորպեսզի ողը ուժեղ հոսանքով չմտնի դասարան և նախ վերին մասում տաքանա և հետո միայն ցած իջնի:

դ) Շինվում են նաև ողը դուրս տանող անցքեր վառարանի կամ պատի ներքևի մասերում:

ե) Վառարանը ևս մեծապես նպաստում է ողափոխության, վորովհետև դռնակից ողի ուժեղ հոսանք է ընդունում այրման պրոցեսի համար և այդ կերպ մասամբ նպաստում ողի մաքրման գործին:

V. ՇԵՆՔԻ ՏԱՔԱՑՆԵԼԸ

Մարմնի մեջ տեղի ունեցող պրոցեսների շնորհիվ մարմնի մեջ առաջանում է տաքություն և տաքացնում վողջ մարմինը: Յեթե մարմինն աստիճանաբար դուրս չթողնի այդ տաքությունը, դրա կուտակումից կարող է այրվել մարմինը, մարմնից մշտապես դուրս տարածվող տաքությունն ու գոլորշիները հնարավորություն են տալիս, վոր մարմնի ջերմությունը մնա նորմալ վիճակի մեջ և ջերմության ներքին ավելորդ կուտակում չառաջանա:

Մեր բնակարանի ողի ջերմությունը մեծ նշանակություն ունի մարմնի նորմալ գործունեյության համար. յեթե բնակարանը ցուրտ է, մարմինը սկսում է իրենից մեծ քանակի տաքություն բաց թողնել, վորով իջնում է մարմնի բնական ջերմության աստիճանը, վորից հետո աննպաստ վիճակ է ստեղծվում մարմնի գործունեյության համար: Յեթե բնակարանը շատ է տաք և գոլորշիներով հարուստ, այդ յերևույթը ևս վատ է անդրադառնում մարմնի գործունեյության վրա, վորովհետև մարմնի ջերմություն բաց թողնելու և բնական գոլորշիացման պրոցեսսը պակասում է:

Աշխատելու համար ջերմության նպաստավոր աստիճանն է համարվում 14° ից մինչև 15° Ցելս:

Ձմեռը մարդու մարմնի բաց թողած ջերմությունը բավական չէ սենյակի տաքությունը ցանկալի աստիճանի վրա պահելու համար, այդ պատճառով ել պետք է դիմել արհեստական տաքացման:

Լավ վառարանը պետք է յերկար տև և համաչափ տաքություն տա, առանց տաքության ուժեղ ճառա-

գայթման, ողը չփչացնե, նպաստի ողափոխության,
քիչ ծախս պահանջի, ազատ լինի հրդեհի վտանգից և
հեշտ գործածելի լինի:

Այս պահանջներին բավարարում ե պատի, թրծված
կամ փայլուն աղյուսից շինված, հոլանդական (հերմե-
տիկ) վառարանը, վորը տարածված ե նաև մեր յեր-
կրում: Վառարանի դուռը պետք ե միջանցքից լինի,
վորպեսզի վառելիս կամ մաքրելիս չկեղտոտվի դասա-
րանը և դասի ժամանակ հնարավոր լինի փայտ ավելա-
ցնել կամ վառվելուն նայել և վորպեսզի տաքանա
միջանցքը:

Կրթական մեծ շենքերի համար ավելի ձեռնտու
յե տաք ջրի հոսանքով սենյակները տաքացնող կենտ-
րոնական վառարանը: Կենտրոնական վառարանը տըն-
տեսում ե ծառայողների թիվը, քիչ ծախս ե պահանջում,
չի կեղտոտում դպրոցի շենքը այրման նյութերով կամ
մոխիրով, տաքացնում ե սենյակները միատեսակ ու
համաչափ:

Մեր յերկրում, թե մասնավոր բնակարաններում
և թե դպրոցներում մեծ չափով տարածված ե թիթեղ-
յա վառարանի գործածությունը. այս վառարանը ա-
րագ կերպով սաստիկ տաքանում ե և նույնքան արագ
ել սառչում, մոտ յեղողները տաքանում են անցանկա-
լի չափերով, վորպեսզի շուտով ելի սառեն, հեռու յե-
ղողները չեն տաքանում բավարար չափով, սենյակի
մեջ ցուրտ ու տաք ողի ուժեղ հոսանք ե առաջանում,
ողի միջի որգանական նյութերը կաշում են վառարա-
նին, այրվում և այդ կերպ ողն ապականում, ողը
խիստ տաքությունից չորանում ե: Այս տեսակ վառա-
րանը պետք ե դուրս հանել գործածությունից:

VI ՇԵՆՔԻ ՄԱՔՐՈՒԹՅՈՒՆԸ

Բազմաթիվ հիվանդություններ առաջանում են շենքի անմաքրությունից, շենքը մաքուր պահելու դեպքում կապկասեն այդ հիվանդությունները, առողջության համարնպաստավոր վիճակ կստեղծվի, աշակերտները մաքրասիրության կվարժվեն և շենքն ազատ կմնա անժամանակ քայքայումից:

Շենքը մաքուր կմնա, ա) յեթե աշակերտները դպրոց մտնելիս իրենց շորերն ու կոշիկները մաքրեն, բ) կրկնակոշիկները և վերարկուն հանդերձասենյակում թողնեն, գ) դասարանում կավիճ, թուղթ, հացի փըշրանքներ և այլ կեղտոտություններ չթափեն, չթքեն, քիթը չմաքրեն և կեղտը հատակին գցեն, դ) դրսից մաքուր, փոշուց ազատ ոգներս հոսի, առհասարակ ողափոխությունը կանոնավոր կատարվի, ե) շենքն ամեն ոք կանոնավոր մաքրվի:

Ուսուցչի և աշակերտի ամենամեծ թշնամին փոշին է, նա գրգռում և չորացնում է շնչառության որգանի նուրբ լորձաթաղանդը, այս դրությունը յերբ հաճախ է կրկնվում, կոկորդը դառնում է վարակման տրամադիր և քանիվոր ուսուցչի կոկորդն ավելի յե աշխատում, այդ պատճառով ել նրա կոկորդն ավելի մեծ չափով է տուժում:

Փոշու առաջը մասամբ կարելի յե առնել, յեթե իրագործվեն հետևյալ պահանջները.

1. Աշակերտները կոթիկները պետք է մաքրեն մուտքի առաջ, այնուհետև մուտքի յետևը ծղոտի մի փովածքի վրա պետք է մաքրեն, իսկ հետո ել շորով հանդերձասենյակի կամ միջանցքի մուտքի մոտ:

2. Խոնավ և ցեխ որերին աշակերտները դպրոցի շենքի մեջ պետք է հագնեն հատուկ կոբիկներ, թողնելով առորյա գործածության կոշիկները հանդերձասենյակում:

3. Գրատախտակը պետք է մաքրել խոնավ շորով:

4. Հատակին չպետք է թափել զանազան կտորտանք և կեղտոտություններ:

5. Շենքն ամեն ու պետք է մաքրել առողջապահության պահանջների համաձայն: Ծանր փոշին $1\frac{1}{2}$ ժամից հետո նստում է գետնին, իսկ թեթևը՝ $1\frac{1}{2}$ —2 ժամ հետո: Սրանից հետևում է, վոր սենյակները պետք է մաքրել ամենաուշը աշխատանքը սկսելուց յերկու ժամ առաջ, վորպեսզի թեթև փոշին ևս նստի հատակին կամ կահկարասիքի վրա: Աշխատանքն սկսելուց քիչ առաջ խոնավ շորով պետք է մաքրել հատակի և կահկարասիքի վրայի փոշին: Սենյակներն ամեն ու պետք է մաքրել խոնավ խոզանակով կամ խոնավ շորով և նավթով: Շաքաթն առնվազը մեկ անգամ հատակն ու պատի ներկած մասերը պետք է լվանալ ջրով և սապնով, վերջն ել մաքրել նավթով: Պատերի, առաստաղի անկյունների փոշին առնվազն ամսական մի անգամ պետք է մաքրել խոնավ շորով:

Շուտ-շուտ պետք է մաքրել նաև պատուհանները, կահկարասիքը, դռները և մանավանդ դռների բռնելու տեղերը:

Մաքրության գործը նպաստավոր վիճակում կդրվի, յեթե ուշադրության առնվեն հետևյալ պահանջները:

1. Դասարաններում և միջանցքներում պետք է լինին կեղտի յեվ քփի ամառներ. այդ ամանները պետք

և ունենան այնպիսի բարձրություն կամ այնպիսի բարձրությամբ պետք է ամրացված լինեն պատերին, վոր աշակերտները կարողանան դյուրությամբ ոգտագործել: Թքամաններում միշտ ախտահանիչ ջուր պետք է պահել, վորպեսզի խորխը չչորանա:

2. Դպրոցը պետք է ունենա բավական թվով լվացատաններ յեվ սրբիչներ աշակերտների լվացվելու և մաքրվելու համար. հակառակ դեպքում պետք է պահանջել, վոր ամեն մի աշակերտ իր սեփական սրբիչն ունենա:

Այս գրքույկը կազմված է հետևյալ գրքերի հետևողությամբ.

1. Под ред. д-ра. А. В. МОЛЬКОВА: Здание трудовой школы 1 ступени, выпуск I и II 1923 г.
 2. М. С. ГРИГОРЕВСКИЙ: В помощь учителю трудовой школы 1923 г.
 3. L. BURGERSTEIN, Schulhygiene 1910 г.
 4. G. SCHNEIDER; Schulgesundheitslehre 1916 г.
 5. W. REIN Pädagogik in syst. Darstel. 1905 г.
-

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Դպրոցական շենք	3
2. Շենքի տեղը	5
3. Շենքի մեծությունը ու ստորաբաժանումը	8
4. Լուսավորություն	19
5. Ոդ և ոդափոխություն	23
6. Շենքի տաքացնելը	27
7. Շենքի մ սրբությունը	29



ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0035665



A 1855

ԳԻՆԸ 20 ԿՈՊ. 24.